600.0301.04.07.17

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 հուլիսի 2017 թվականի №301Ա
քաղ. Երևան

«ՏԱՔՍԻ ԴԵ ԼՅՈՒՔՍ ՍԻԹԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀԱՐՈՒՑՎԱԾ ՎԱՐՉԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 13-Ի №212Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) Հայաստանի Հանրապետության տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարության 2017 թվականի հունիսի 12-ի №03/11.1/10160-17 գրությամբ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) տեղեկացվել է «ՏԱՔՍԻ ԴԵ ԼՅՈՒՔՍ ՍԻԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (այսուհետ՝ ընկերություն) պատկանող բազային ռադիոկայանի տեղափոխման վերաբերյալ,

բ) Հանձնաժողովը վարչական վարույթ է հարուցել ընկերության նկատմամբ՝ ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության պայմաններով նախատեսված բազային ռադիոկայանի տեղադրման վայրի փոփոխության փաստի ուսումնասիրության նպատակով, որի մասին ընկերությունը ծանուցվել է Հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 15-ի №ԱԲ-1577Հ գրությամբ,

գ) ընկերությունը 2017 թվականի հունիսի 21-ին դիմել է Հանձնաժողով՝ հայտնելով, որ դադարեցրել է առանց թույլտվության տեղափոխած բազային ռադիոկայանի աշխատանքը՝ միաժամանակ խնդրելով փոփոխություն կատարել ընկերությանը տրամադրված ռադիոհաճախականության օգտագործման №0995 թույլտվության պայմաններում,

դ) վարչական վարույթի արդյունքում փաստվել է, որ ընկերության կողմից ըստ էության վերացվել է ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության պայմանների խախտումը, և

հիմք ընդունելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի «ա» կետը, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հանձնաժողովը **որոշում է.**

1. Կարճել ընկերության նկատմամբ ռադիոհաճախականության օգտագործման №0995 թույլտվության պայմանների խախտման համար 2017 թվականի հունիսի 15-ին հարուցված վարչական վարույթը:
2. Հանձնաժողովի 2012 թվականի հունիսի 13-ի «ՏԱՔՍԻ ԴԵ ԼՅՈՒՔՍ ՍԻԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը ռադիոհաճախականության օգտագործման թույլտվություն տրամադրելու մասին» №212Ա որոշմամբ հաստատված ռադիոհաճախականության օգտագործման №0995 թույլտվության պայմանների 4-րդ կետի 2-րդ, 4-րդ և 10-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

   «2) բազային ռադիոկայանի տեղադրման վայրը՝ քաղաք Երևան, Կիևյան 3.».

   «4) բազային ռադիոկայանի տեղադրման վայրի աշխարհագրական կոորդի-նատները՝ 44E 29′ 09″, 40N 11′ 38″.».

   «10) անտենայի բարձրությունը երկրի մակերեսից՝ 25 մետր.»:
3. Ընդունել ի գիտություն, որ ընկերությունն իրավասու է՝
   1) սույն որոշման հրապարակումից հետո երեսնօրյա ժամկետում միջնորդել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովին՝ վերանայելու այն.
   2) սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընկերությանն օրենքով սահմանված կարգով իրազեկելուն հաջորդող օրվանից, բացառությամբ սույն որոշման 2-րդ կետի, որն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՏԵՂԱԿԱԼ՝ Մ. ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

ք. Երևան
4 հուլիսի 2017թ.